

ԷԼ - 1042



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան
« 29 » 01 2024թ.



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 013 - 24

Ձեռնարկողը՝

«ՄԱՔՈՒՐ ԱՎԱԶ 2022» ՍՊԸ

Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ Բարեկամության փ. 14 նրբ ք. 3

Գործունեությունը՝

Գեղարքունիքի մարզի Նորայրուսի ավազի և գլաքարակույծային խառնուրդի հանքավայրի առաջին փեղամասում 2023-2024թթ. կադարվելիք երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 013 - 24

< 29 > հունիսի 2024թ.

Գեղարքունիքի մարզի Նորատուսի ավազի և գլաքարակոպճային խառնուրդի հանքավայրի առաջին տեղամասում 2023-2024թթ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝

«ՄԱՔՈՒՐ ԱՎԱԶ 2022» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Բ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Գեղարքունիքի մարզ, Գավառ համայնք Նորատուս բնակավայր

Ներածական մաս Հայցվող տեղամասը գտնվում է Գեղարքունիքի մարզի Գավառ խոշորացված համայնքի Նորատուս բնակավայրի վարչական տարածքում: Մոտակա բնակավայրերն են Սարուխան, Լանջաղբյուր, Նորատուս, Երանոս գյուղերը և Գավառ քաղաքը:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը համայնքային սեփականություն հանդիսացող 05-071-0252-0101 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը վարելահող և այլ հողեր:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. «Մաքուր ավազ 2022» ՍՊԸ նախատեսում է երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարում Նորատուսի ավազի և գլաքարակոպճային խառնուրդի հանքավայրի առաջին տեղամասի 8.02հա տարածքում, նպատակ ունենալով պարզաբանել օգտակար հանածոյի որակական հատկանիշները և նրանց պիտանելիությունը «Ավազ շինարարական աշխատանքների համար» 8736-2014 ԳՈՍՍ-ի տեխնիկական պահանջներին, որպես շինարարական ավազ, ճանապարհաշինարարության պաստառահումք և ծանր բետոնի լցանյութ:

Հայցվող տարածքը սահմանափակվում է հետևյալ եզրային կոորդինատներով (ըստ ArmWGS-84 համակարգի).



1. Y =8513781.48 X =4473105.65 3. Y =8514189.10 X=4473307.47
 2. Y =8514189.10 X =4473105.65 4. Y=8513781.48 X=4473297.34

Տեղամասի երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման համար նախատեսվում է հորատել 5 հորատանցք՝ յուրաքանչյուրը 8գծ.մ խորությամբ, 40գծ.մ ընդհանուր ծավալով: Հորատումը կիրականացվի YԴԵ-50M ինքնագնաց հորատող հաստոցով, կարծր համաձուլվածքային թագիկներով, 103մմ նախնական և 93մմ վերջնական տրամագծով: Օգտակար հանածոյի հորատհանուկի գծային ելքը պետք է կազմի 95%:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր հորատանցքերը: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1: 100 մասշտաբով:

Ավազի ծավալային զանգվածը բնամասում նախատեսվում է որոշել երևակման տարբեր մասերի 3 փորձարկման կետերում: Այն կիրականացվի դաշտային պայմաններում, հայտնի ծավալից հանված ապարի կշռման եղանակով, որի ընթացքում կորոշվի նաև ավազահումքի փխրեցման գործակիցը: Չափագրումից ու հանված ապարի կշռումից հետո այն կենթարկվի հետլցմանման:

Տեղամասի ավազի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է հորատանցքերը ենթարկել նմուշարկման: Նախատեսվում է վերցնել 10 հանուկային նմուշ: Յուրաքանչյուր հորատանցքից նախատեսվում է վերցնել 2 հանուկային նմուշ, յուրաքանչյուրը միջինը 3.8մ երկարությամբ:

Վերցված 10 նմուշները կենթարկվեն ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների մասնագիտացված լաբորատորիայում:

Քիմիական և միներալոգիապետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար նախատեսվում է համապատասխանաբար վերցնել 2-ական նմուշ:

Նախքան լաբորատորիա ուղարկելը նմուշները տեղում կենթարկվեն մշակման: Հանուկային նմուշները համարակալվում և դասավորվում են հատուկ արկղներում, նոր միայն ուղարկվում լաբորատորիա լրիվ ծրագրով ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար:

Հետախուզվող տարածքում ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով նախատեսվում է կատարել համապատասխան դիտարկումներ ջրաբեր հորիզոնների և գեոդինամիկ երևույթների առկայությունը պարզաբանելու համար:

Տեղամասի տարածքում և անցած հետախուզական փորվածքներում СРП-681 (N596) ռադիոչափիչ սարքով գամմա պրոֆիլավորման գամմա ակտիվության չափումների միջոցով, նախատեսվում է չափել ավազակոպճային կուտակի ռադիոակտիվությունը:

Հորատման աշխատանքների ավարտից հետո կատարվելու է հորատման հարթակների ռեկուլտիվացիա: Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախատեսվում է հորատահարթակների կառուցման ժամանակ հանել հողի շերտը (0.21մ չափով), պահեստավորել անմիջապես հարթակի մոտ, իսկ աշխատանքների ավարտից հետո,



լանդշավտի վերականգնման նպատակով ծածկել հողաշերտով, ցանել տարախոտային խառնուրդի սերմեր: Ռեկուլտիվացիայի ընդհանուր ծավալը կազմում է. 24.25մ³:

Բնապահպանական միջոցառումների իրականացման համար ընկերության կողմից կհատկացվի 1076.0հազ. ՀՀ դրամ, որից 94.5հազ.դրամը՝ տարածքի ռեկուլտիվացիայի համար:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

Տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը, յուղերի փոխարինումը, մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարվելու է մոտակա Նորատուս բնակավայրում: Դա կբացառի երևակման տարածքի աղտոտումը նավթամթերքներով:

- Կենցաղային աղբի հավաքում հատուկ պարկերի մեջ և հետագա տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր: Աղբահանության նպատակով համապատասխան ծառայությունների հետ նախատեսվում է կնքել պայմանագիր և կատարել համապատասխան վճարումները:

- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում:

- Աշխատող մեքենայի շարժիչի կարգավորում՝ աղմուկի մակարդակի կարգավորման և կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության նվազեցման նպատակով:

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Փորձաքննական գործընթացում պարզվել է, որ երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը գտնվում է Սևանա լճի ջրհավաք ավազանի սահմաններում, Սևանա լիճ լցվող Գավառագետից 37-46մ հեռավորության վրա, սահմանակից է «Սևան» ազգային պարկին, գտնվում է անտառի եզրին: Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի N 64-Ն որոշմամբ, «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի և 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, երկրաբանական ուսումնասիրության՝ հետագայում արդյունահանման աշխատանքները կառաջացնեն վնասակար ազդեցություններ ազգային պարկի անտառածածկ տարածքների և Սևանա լճի էկոհամակարգի վրա:


Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ներքին գործերի նախարարությունները, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը, կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Գեղարքունիքի մարզպետարանը: Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացված Գեղարքունիքի մարզպետարանի գրության՝ հայցվող տարածքում նպատակահարմար չէ նախատեսվող գործունեության իրականացումը:

Օրենսդրությամբ սահմանված կարգով, փորձաքննության փուլերում, Գեղարքունիքի մարզի Գավառ խոշորացված համայնքի Նորատուս բնակավայրում անցկացվել է հանրային քննարկում:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ



«ՄԱՔՈՒՐ ԱՎԱԶ 2022» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Նորատուսի ավազի և գլաքարակոպճային խառնուրդի հանքավայրի առաջին տեղամասում 2023-2024թթ. կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ  Հովիկ Մետրոպյան

